Հենրիկ Իգիթյան

Արվեստաբան

Ծնվել է 1932թ. Թբիլիսիում:

Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանի Կիրովի անվան դպրոցում:

1956թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, իսկ 1963թ.՝ Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիայի արվեստաբանական ֆակուլտետը:

1960 - 70 թթ. աշխատել է Հայաստանի ազգային պատկերասրահում:

1970թ. հիմնադրել է աշխարհում առաջին մանկական պատկերասրահը (Ժաննա Աղամիրյանի հետ), 1972-ին՝ Ժամանակակից արվեստի թանգարանը, 1978-ին՝ Մանուկների գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնը, 1994թ.՝ «Նոյյան տապան» հայ արդի նկարիչների ընկերակցությունը:

1989 - 91թթ. եղել է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր: Հեղինակ է բազմաթիվ մենագրությունների, ալբոմների, արվեստաբանական հոդվածների:

Մահացել է 2009թ.:

Պարգևատրվել է Խաչատուր Աբովյանի, Մովսես Խորենացու և Մխիթար Գոշի անվան մեդալներով: